ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱ

Սահմանադրական գործընթացների ազդեցությունը հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների ժողովրդավարացման վրա*

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ
Երևանի պետական լեզվա-հասարակագիտական համալսարան,
Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոն

Ստացված է 12.07.2014
Ընդունված է 17.11.2014

Հոդվածում քննարկվում են հետխորհրդային տրանսֆորմացիայում գտնվող երկրների ժողովրդավարացման խնդիրներն այդ գործընթացի երրորդ՝ աշխարհաքաղաքական ազդեցությունների ուժեղացման փուլում: Ցույց է տրվում, որ թեև կարող է տպավորություն ստեղծվել, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի երրորդ խմբի երկրների համար էլ հետագա ընթացքը դառնում է միանշանակ՝ այդ ազդեցության ուժեղացման արդյունքում աշխարհաքաղաքական կողմնորոշման հետևանքով, սակայն մի շարք հանգամանքների հետևանքով դրանց համար դեռևս տևական ժամանակ «ժողովրդավարություն, թե ավտորիտարիզմ» այլընտրանքի հնարավորությունը կմնա: Վերջնական ընտրությունը պայմանավորված կլինի սահմանադրությունից սահմանադրականությանն անցման հաջողությունից: Այդ գործընթացում առանցքային նշանակություն ունի բազմակուսակցական համակարգի կայացածությունը, իսկ առողջ կուսակցական համակարգի ձևավորման և կայացման կարևորագույն գործոնը անաչառ, քաղաքական ազդեցություններից զերծ մասնագիտական միջավայրերի ձևավորումն է:

Բանալի բառեր
Հետխորհրդային տրանսֆորմացիա, ժողովրդավարացում, աշխարհաքաղաքական ազդեցությունների ուժեղացման փուլ, սահմանադրականություն, արժեքներ, կուսակցական համակարգ:

Նախաբան

ԽՍՀՄ փլուզումից հետո սկսված և մոտ երեք տասնյակ երկրներ ընդգրկող աննախադեպ երևույթի՝ հետկոմունիստական տրանսֆորմացիայի բնույթի մասին սկզբնական պատկերացումների հիմքում Ս. Հանթինգթոնի գնահատականն էր[1]: Նա համարում էր, որ դա

*Հոդվածը «Սահմանադրական գործընթացների ազդեցությունը հետխորհրդային տրանսֆորմացիայի վրա» (Երևան, 3-4 նոյեմբերի, 2014թ.) համաժողովում ներկայացված զեկույցի լրամշակված տարբերակն է:

ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շարունակությունն է, որի արդյունքում այդ երկրներում հաստատվելու են ժողովրդավարական վարչակարգեր: Հավանաբար նման գնահատականներն էին պատճառը, որ սկզբնական շրջանում տրանսֆորմացիայի գործընթացում հատկապես կարևորվում էին տնտեսական գործոնները՝ սեփականաշնորհումը, շուկայի ազատականացումը և այլն: Իհարկե, չի կարելի հաշվի չառնել նաև այն հանգամանքը, որ նման մոտեցումը մեծապես խրախուսում էին Համաշխարհային բանկն ու Արժույթի միջազգային հիմնադրամը՝ խորը ֆինանսատնտեսական ճգնաժամում հայտնված երկրներին տրամադրելով ցածր տոկոսադրույքներով ահռելի վարկային ռեսուրսներ: Սակայն ճգնաժամը շատ ավելի խորն էր՝ այն համակարգային բնույթ ուներ և արդեն մի քանի տարի անց սկսեց ակնհայտ դառնալ, որ ոչ միայն այդ տրանսֆորմացիան «երրորդ ալիքից» տարբերվում է առնվազն հինգ էական գործոններով[2], այլև որ թեև տնտեսական զարգացման մակարդակի և ժողովրդավարության ձևավորման միջև կա դրական կապ, սակայն այն որոշիչ չէ:[3] 20-րդ դարի 80-90-ական թվականներին շատ երկրներում ժողովրդավարացումն ընթանում էր խորը տնտեսական ճգնաժամի պայմաններում, սակայն մի շարք երկրներում հաջողություն ունեցավ: Որպես նոր առացքային գաղափար 90-ականների երկրորդ կեսին առաջին պլան մղվեց նեոինստիտուցիոնալիզմը[4], որի շրջանակներում փորձ էր արվում ապահովել ժողովրդավարացման գործընթացի արդյունավետությունը: Նպատակն էր որոշել, թե որ մոդելն է ավելի համապատասխանում այս կամ այն երկրի կամ տարածաշրջանի զարգացմանը և ինչպես ավելի լավ «կառուցել ժողովրդավարություն»[5]: Ինստիտուցիոնալ գործոններից հատկապես կարևորվում էին

- ընտրական համակարգի ընտրությունը՝ մեծամասնական, թե համամասնական կամ խառը համակարգ;
- ներկայացուցչական հաստատությունների կառուցվածքը;
- կուսակցությունների և կուսակցական համակարգերի զարգացումը;[6]

---

[1] **Huntington S**., The Third Wave: Democratization in the Late Twentieth Century. Norman and London, University of Oklahoma Press, 1991

[2] **Terry S.,** Thinkign about Post-Communist Transitions: How Are They? *Slavic Review*, 1999, 2, 333-339.

[3] **Lipset S. M.,** The Social Requisites of Democracy Revisited, *American Sociological Review*, **59**, 1, 1994, 1-22.

[4] **North D.,** Institutions, Institutional Change and Economic Performance. Cambridge: Cambridge University Press, 1990.

[5] **Koelbe T. A.,** The New Institucionalism in Political Science and Sociology, *Comparative Politics*, January, 1, 1995, 231-243.

[6] Stabilizing Fragile Democracies: Comparing New Party Systems in Southern and Eastern Europe (Ed. by G. Pridham, P. Lewis). London; New York: Routledge,

- քաղաքական համակարգի ընտրությունը՝ նախագահական, խորհրդարանական, կիսանախագահական կամ այլ համակարգ:[7]

Դժվար չէ նկատել, որ թվարկված են հիմնական քաղաքական սահմանադրական ինստիտուտներն ու դրանց փոխհարաբերությունները: Ընդ որում, գլխավոր՝ քաղաքական համակարգի ընտրության հարցը, թեև պարբերաբար դառնում է բուռն քննարկումների, իսկ վերջին երկու տասնամյակների ընթացքում՝ նաև մանրակրկիտ գիտական, մասնավորապես, քանակական ուսումնասիրությունների առարկա[8], այդուհանդերձ, անգամ ամենաընդհանուր գնահատման փորձերը դեռևս միանշանակ պատասխաններ չեն առաջարկում: Հատկանշական է, որ թեև փորձագետների զգալի մասը պնդում է, որ ժողովրդավարական զարգացումների ապահովման տեսակետից նախընտրելի է խորհրդարանական համակարգը, սակայն այդ համակարգին անցման վաղաժամկետ փորձերը հետխորհրդային հասարակություններում կարող են հակաժողովրդավարական տրամադրություններ առաջացնել, ինչպես դա տեղի ունեցավ Բելառուսում:[9] Խնդիրը բարդ է մեկ այլ տեսակետից ևս: Հետխորհրդային տրանսֆորմացիայի գործընթացում գտնվող երկրները, որպես կանոն, կամ ընդունում էին նոր սահմանադրություն, կամ արմատապես փոխում հինը. խորհրդային հանրապետությունների համար

1996; Ware A. Political Parties and Party Systems. Oxford: Oxford University Press, 1996.

[7] Parliamentary versus Presidential Government (Ed. by A. Lijphart). Oxford, Oxford University Press, 1992.

[8] **Krouwel A.,** Measuring Presidentialism of Central and East European Countries. Working Papers: Political Science, No 02, Amsterdam. 2003; **Shugart M. S., Carey J.M**., Presidents and Assemblies. Constitutional Gesign and Electoral Dynamics. Cambridge. 1992; **Frye T.,** A Politics of Institutional Choice: Post-Communist Presidencies. *Comparative Political Studies*, 1997, **30**, 5; **Siaroff A.,** Comparative Presidencies: The Inadequacy of the Presidential, Semi-Presidential and Parliamentary Distinction. European Journal of Political Research, vol. 42, 2003; **McGregor J.,** The Presidency in East Central Europe, RFR/RL Research Report, 1994, vol. 3, No 2; **Johannsen L.,** The Springboard Model. Presidential Authority, Democracy, Development and economic Freedom. Paper prepared for the 43rd Annual ISA Convention. New Orleans. 2002; **Зазнаев О.И.**, Индексный анализ государств Европы и постсоветского пространства, *Полис*, 2, 2007, 146-164; **Johannsen L., Norgaard O.,** IPA: The Index of Presidential Authority. Explorations into the Measurement an Impact of a Political Institution. Paper prepared for the ECPR Joint Sessions of Workshops. Edinburgh. 2003.

[9] **Мазманян А.,** Выбор оптимальных институтов: взгляд на строительство демократии в постсоветских странах, *Сравнительное конституционное обозрение*, 2 (59), 2007, 122-128.

ընդունված սահմանադրությունները ստեղծված իրավիճակում այլևս կիրառելի չէին, ինչպես խորհրդային քաղաքական, տնտեսական սոցիալական և մյուս համակարգերը: Բնական է, որ սահմանադրական գործընթացների արդյունավետությունը նման իրավիճակներում կախված է երկու գործոնի համադրման ներդաշնակությունից՝ հայտնի սահմանադրական սխեմաների փոխառում և համապատասխանեցում կիրառման միջավայրի առանձնահատկություններին:[10] Սակայն, քանի որ սահմանադրություններն այս կամ այն չափով նպաստում են ազգերի ձևավորմանը՝ յուրաքանչյուր ազգի հնարավորություն տալով իրեն ընկալել քաղաքական միավոր, երբեմն թերահավատություն է առաջանում համեմատական սահմանադրական նյութերի օգտագործման նկատմամբ:[11] Բայց ««չորս պատի» հայեցակարգը պետք է ընկալել ոչ թե որպես համեմատական սահմանադրական նյութերի օգտագործման արգելք, այլ որպես նորմ, որը երաշխավորում է, որ օտարերկրյա իրավական սկզբունքները չեն կիրառվի այն դեպքում, երբ դրանք հնարավոր չի լինի պատշաճ կերպով համատեղել» տեղի սահմանադրա-իրավական փաստաթղթերի հետ:[12] Երբ խնդիրը վերաբերում է համընդհանուր սկզբունքների, մասնավորապես, մարդու իրավունքներին և ժողովրդավարությանը, համեմատական մեթոդը հնարավորություն է տալիս գտնել այնպիսի լուծումներ, որոնք նպաստում են ոչ միայն կոնկրետ խնդրի լուծմանն, այլև ազգային օրենսդրության բարելավմանը:

2000-ականների սկզբին պարզ էր դառնում, որ սկզբնական շրջանի լավատեսական կանխատեսումները՝ տրանսֆորմացիայի արդյունքում դրանում գտնվող բոլոր երկրներում ժողովրդավարական վարչակարգերի հաստատման վերաբերյալ, չեն հաստատվում: Ժողովրդավարացման բացարձակեցումը հաշվի չէր առնում ազգային քաղաքական մշակույթների տարբերությունը, աշխարհաքաղաքական գործոններն ու

[10] **Torosyan T.,** Constitutional Borrowing is Inevitable, at the Same Time Quite Difficult and Sometimes Even Impossible, *Tuori K., Walker N. (ed.). Constitutional Design, CDL-UD(2013)001-bil*, Venice, 2013, pp. 6-13, available at www.venice.int/webforms/documents/?pdf=CDL-UD(2013)001-bil

[11] **Tushnet M.,** The Possibilities of comparative Constitutional Law, *Yael Law Journal*, 1999, **108**, 6, 1225-1228.

[12] **Tsen-Ta Lee J.,** Interpreting Bills of Rights: The Value of a Comparative Approach, *International Journal of Constitutional Law*, 2007, **5,** 1, 122-152.

կախվածությունները[13]: Արդեն 90-ականների վերջին ակնհայտ էր, որ ավելի ու ավելի էր մեծանում տարբեր երկրներում (մի կողմից՝ բալթյան երկրներ, մյուս կողմից՝ Հայաստան, Վրաստան Ուկրաինա, Ռուսաստան և այլն) ժողովրդավարության ձևավորման գործընթացների միջև տարբերությունն, իսկ որոշ երկրներ էլ (Կենտրոնական Ասիայի երկրներ, Բելառուս, Ադրբեջան) ակնհայտորեն շարժվում էին այլ ուղղությամբ: Հետկոմունիստական երկրների ժողովրդավարացման գործընթացում հաջողությունը մեծապես կախված էր այդ երկրների նախախորհրդային ուղուց և դրա վերաբերյալ պահպանված հիշողությունից[14]: Ֆ. Ռոդերը կարևորում էր ազգային փոխակերպումը, ինչը ենթադրում է ազգային պետությունների ձևավորում հասարակական գիտակցության տրանսֆորմացիայի հետ միաժամանակ[15]: Անգամ Ս. Հանթինգթոնը՝ 90-ականների սկզբին հետխորհրդային տրանսֆորմացիայի գծային զարգացման տեսակետի գլխավոր հեղինակներից մեկն, ավելի ուշ պնդում էր. «արևմտյան արժեքների փոխադրումն այլ քաղաքակրթական միջավայրեր՝ դրանց վեստերնիզացիան, ոչ միայն անհնարին է, այլև անբարոյական իր հետևանքներով, քանզի արդիականացումն ու տնտեսական զարգացումը չեն պահանջում մշակութային վեստերնիզացիա և դրան չեն հանգեցնում: Ընդհանուր դեպքում եվրոպական (արևմտյան) ուղու ընտրությունը չի կարող լինել միակ և անգամ ճիշտ ճանապարհը»[16]: Հետևաբար պահանջվում էր հետկոմունիստական տրանսֆորմացիայի բնույթի և հարացույցի վերաբերյալ առաջին տասնամյակում ձևավորված տեսական հիմքերի էական վերանայում:

---

[13] **Саква Р.,** Сравнительный анализ изменений политических режимов стран постсоветской Евразии, *Сравнительное конституционное обозрение*, 4 (57), 2006, 117-127.

[14] **Թորոսյան Տ.,** Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչ., 2006թ.:

[15]**Roeder Ph.** People and States after 1989: The Political Costs of Incomplete National Revolutions, *Slavic Review*. 1999. **58**, 4, 854-882.

[16] **Huntington S.,** The West: Unique, not Universal, *Political Affairs*, 1996, **75**, 6, 28-46.

Ժողովրդավարացումը որպես հետկոմունիստական տրանսֆորմացիայի նպատակ

2000-ականների սկզբին արդեն տիրապետող էին հոռետեսական գնահատականները հետխորհրդային տրանսֆորմացիայի բնույթի վերաբերյալ: Ոմանք համարում էին, որ այդ երևույթի հարացույցի գոյությունն առասպել է[17], Թ. Կարոզորսն էլ կարծում էր, որ այդ հարացույցն իրեն սպառել է, քանի որ, ընտրությունները չեն կարող առանցքային նշանակություն ունենալ ժողովրդավարացման գործընթացում, ինչպես մինչ այդ ենթադրում էին[18]: Այդուհանդերձ, իրադարձությունների հետագա զարգացումը հնարավորություն տվեց ոչ միայն հստակեցնել տրանսֆորմացիայի բնույթն, այլև ֆորմալիզացնել այդ գործընթացի շրջանակներում ժողովրդավարացման հեռանկարներն ու հնարավորությունները: 2004թ. տեղի ունեցած Եվրամիության ամենաընդգրկուն ընդլայնումը, ինչպես նաև մի քանի երկրներում տեղի ունեցած «»գունավոր» հեղափոխությունները[19] վերջնականորեն հաստատեցին այն պնդումները, որ այդ տրանսֆորմացիան ուրույն գործընթաց է, որը երկրների տարբեր խմբերի համար ունի տարբեր ընթացք և ուղղություն՝ միանգամայն տարբեր ելքերով: Հետխորհրդային երկրները բաժանվեցին երեք հիմնական խմբի՝ ըստ անցած հետագծի ու նշմարվող ապագայի.

- ԵՄ նոր անդամ երկրներ, որոնք ձևավորել էին կայացած ժողովրդավարական վարչակարգեր,
- երկրներ, որոնք ժողովրդավարական վարչակարգերի ձևավորումը հռչակել էին սահմանադրական նպատակ, այդ ուղղությամբ արձանագրել էին որոշ արդյունքներ, սակայն պահպանում էին ավտորիտարիզմի էական հատկանիշներ,
- երկրներ, որոնք գնում էին ավտորիտարիզմի խորացման, իսկ դրանցից որոշները՝ ամբողջատիրական վարչակարգերի հաստատման ուղղությամբ:[20]

---

[17] **Gans-Morse J.**, Searching for Transitologists: Contemporary Theories of Post-Communist Transitions and the Myth of a Dominant Paradigm, *Post-Soviet Affairs*, 2004, **20**, 4, 320-349.

[18] **Carothers T.,** The End of the Transition Paradigm, *Journal of Democracy*, 2002, **13**, 1, 6-21.

[19] **Թորոսյան Տ., Վարդանյան Ա.,** Ուր են տանում «գունավոր» հեղափոխությունների ճամփաները: *Հանրային կառավարում*, 5, 2005թ., էջ 90-101:

[20] **Թորոսյան Տ., Սուքիասյան Հ.,** Հետխորհրդային տրանսֆորմացիայի երեք փուլերը, երեք խմբերը և երեք հարացույցերը: *Հայկական քաղաքագիտական հանդես*, 1, 2014թ., էջ 20-33.

Առաջինը կարելի է կոչել կայացած ժողովրդավարության խումբ, երկրորդը՝ «սպասման» խումբ, իսկ երրորդը՝ կոշտ ավտորիտարիզմի կամ ամբողջատիրության խումբ: 2008 թվականից հետո տեղի ունեցած իրադարձությունները ոչ միայն վերջնականորեն հաստատեցին այս բաժանման հավաստիությունն, այլև թույլ տվեցին արձանագրել, որ այդ խմբերից յուրաքանչյուրն ունի առանձնահատուկ հարացույց, իսկ տրանսֆորմացիայի գործընթացը բաղկացած է երեք փուլերից:[21] Այդ փուլերն ունեցել են տարբեր տևողություններ և միմյանցից հստակորեն տարբերվել են առանցքային նշանակություն ունեցող հատկանիշներով: Ամենատևական՝ առաջին փուլում (մինչև 2000թ.) նախկին սոցիալիստական ճամբարի մաս կազմած եվրոպական երկրներում, ինչպես նաև ԽՍՀՄ փլուզումից հետո ստեղծված անկախ պետություններում ձևավորվեցին միանգամայն նոր վարչակարգեր: Այդ փուլը կարելի է համարել պետականության ձևավորման փուլ: Երկրորդ փուլը (2000–2007թթ.) կարելի է կոչել արժեքային համակարգի հիման վրա ուղիների տարամիտման փուլ, երրորդ փուլը (2008թ. սկսած)՝ աշխարհաքաղաքական գործոնի գերիշխանության փուլ: Եթե պետականության ձևավորման փուլում այդ գործընթացում ներգրավված երկրների ընթացքներն էականորեն չէին տարբերվում, ապա երկրորդ փուլում այդ երկրները բաժանվեցին վերոհիշյալ երեք խմբի՝ ըստ իրենց դավանած արժեքային համակարգի: Եթե առաջին փուլում՝ որոշ վերապահումներով, կարելի էր խոսել հետխորհրդային տրանսֆորմացիայի համար ընդհանուր հարացույցի գոյության և նման երևույթների ուսումնասիրման համար մինչ այդ օգտագործված տեսությունների ու գործիքների կիրառման հնարավորության մասին, ապա երկրորդ փուլում արդեն պետք էր դիտարկել երեք միանգամայն տարբեր հարացույցներ: Կարելի է համարել, որ առաջին և երրորդ խմբերի երկրների համար հետկոմունիստական տրանսֆորմացիան երկրորդ փուլով ավարտվեց, իսկ երրորդ փուլը կարող է դիտարկվել միայն «սպասման» խմբի երկրների համար: Դրանց հետագա ընթացքի համար էական նշանակություն կունենա աստիճանաբար գերակշռող ազդեցություն ստացած աշխարհաքաղաքական գործոնը:

[21] Նույն տեղում:

Աշխարհաքաղաքական գործոնի ազդեցությունը

Առնվազն վերջին երեք դարերի ընթացքում Եվրասիական կենտրոնում, մասնավորապես, Հարավային Կովկասում իրադարձությունների զարգացման վերլուծությունը բացահայտում է երեք օրինաչափություն. յուրաքանչյուր դարասկզբին տեղի է ունենում ազդեցիկ երկրների միջև հաստատված հավասարակշռության փոլզում, հետագա 25-30 տարիների ընթացքում ծավալվում է նոր պայքար ազդեցության գոտիների վերաբաշխման համար, ապա հաստատվում է նոր հավասարակշռություն:[22] ԽՍՀՄ փլուզումից հետո սկսված այդ պայքարի նոր շրջանի՝ հետխորհրդային տրանսֆորմացիայի երրորդ՝ աշխարհաքաղաքական ազդեցությունների ուժեղացման փուլի սկիզբը խորհրդանշող իրադարձությունները երկուսն էին: Նախ, 2007-ին Մյունխենում տեղի ունեցած Անվտանգության քաղաքականության խորհրդաժողովում Ռուսաստանի նախագահի ելույթը[23], որով Վ. Պուտինն իր կտրուկ անհամաձայնությունն արտահայտեց Միացյալ Նահանգների քաղաքականությանն՝ ուղղված միաբևեռ աշխարհի ձևավորմանը: Ապա, 2008-ի օգոստոսին տեղի ունեցած հնգօրյա ռուս-վրացական պատերազմը, որն ազդարարեց. հետխորհրդային տարածքում ռուս-ամերիկյան մրցակցությունը թևակոխում է կոշտ բախումների փուլ[24]: Հետագա զարգացումներում առանցքային նշանակություն ունեցավ Եվրամիության Արևելյան գործընկերության ծրագիրը: 2013թ. նոյեմբերին տեղի ունեցած վիլնյուսյան գագաթաժողովից հետո կտրուկ սրվեց իրավիճակը: Եվրամիությունը նախատեսում էր, որ այդ գագաթաժողովը շրջադարձային կլինի գործընթացում ներգրավված երկրների և Եվրամիության հարաբերությունների համար, քանի որ այդ երկրներից չորսի հետ՝ Ուկրաինա, Հայաստան, Վրաստան, Մոլդովա, գագաթաժողովի ընթացքում նախատեսվում էր ստորագրել ասոցացման և ազատ առևտրի համաձայնագրեր: Եթե կարելի էր կանխատեսել, որ

[22] **Torosyan T.**, The Return of Turkey, *Russia in Global Affairs*, 3, July-September, 2009, 120-129.

[23] Vladimir Putin, 'Speech at the 43rd Munich Conference on Security Policy, February 10, 2007, available at http://globalsecurity.org/…/2007/putin-munich_070210.htm

[24] **Թորոսյան Տ.** Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն: Երևան, «Տիգրան մեծ», 2012թ.:

Վրաստանն ու Մոլդովան համաձայնագրերը կստորագրեն, և սեպտեմբերի սկզբին արդեն պարզ էր, որ Հայաստանը դա չի անի, ապա միանգամայն նոր իրավիճակ ստեղծեց այդ քառյակում իր կարևորությամբ առանձնահատուկ դիրք ունեցող Ուկրաինայում իրադարձությունների զարգացումը: «Եվրամիություն-Միացյալ Նահանգներ-Ռուսաստան» եռանկյունու մեջ «առևտրային» ոլորապտույտում մոլորված Ուկրաինայի նախագահ Վ. Յանուկովիչը ոչ միայն չնկատեց, որ կորցնում է իրավիճակի իրատեսական պատկերացումն ու վերահսկման հնարավորությունն, ապա՝ նաև իշխանությունն, այլև Ուկրաինան դարձրեց նոր աշխարհակարգի հաստատման գործընթացում մրցակցության գլխավոր թատերաբեմ: Պարզ դարձավ, որ նոր աշխարհակարգի հաստատման գործընթացը թևակոխել է վճռական փուլ և դարձել է հետխորհրդային տրանսֆորմացիայի ամենաազդեցիկ գործոնը: Ահա թե ինչու հատուկ ուսումնասիրության է արժանի այս գործոնի ազդեցությունը հետխորհրդային հասարակությունների ժողովրդավարացման վրա: Հատկապես, որ թեև ժողովրդավարացման միջազգային ասպեկտը գրականության մեջ լավ լուսաբանված է[25], սակայն ներքին վերակառուցման և արտաքին գործոնների համախմբի ազդեցության հատումը դեռևս խորապես ուսումնասիրված չէ[26]:

Երկրորդ խմբում գտնվող երկրների (Ուկրաինա, Հայաստան, Վրաստան, Մոլդովա, Ղրղզստան) վերջնական քաղաքակրթական ընտրությամբ էլ՝ արևմտյա՞ն, թե՞ ուղղափառ քաղաքակրթություն կամ ինտեգրման միջավայր, կավարտվի հետխորհրդային տրանսֆորմացիան: Սակայն անգամ երկրորդ ընտրության դեպքում «ժողովրդավարացում, թե ավտորիտարիզմ» երկընտրանքի որոնումներն այդ երկրներում կարող են շարունակվել: Հետևաբար հետաքրքիր է դիտարկել այդ երկրներում ժողովրդավարացման դանդաղ ընթացքի պատճառները, հետագա զարգացումների և կայացած ժողովրդավարության հասնելու հնարավորությունները:

---

[25] Building Democracy: The International Dimension of Democratization in Eastern Europe (Ed. by G. Pridham, E. Herring, G. Sanford); **Badie B.,** The Imported State: The Westernization of Political Order. Cambridge: Cambridge University Press, 2000, Democratic Consolidation in Eastern Europe, vol. 2: International and Transitional Factors (Ed. by J. Zielonka, A. Pravda). Oxford: Oxford University Press, 2001.

[26] **Koelbe T. A.,** The New Institucionalism in Political Science and Sociology, *Comparative Politics*, January, 1995, 231-243.

Հետկոմունիստական ժողովրդավարացում. սահմանադրությունից դեպի սահմանադրականություն

Ժողովրդավարացման գործընթացների ուսումնասիրությունների արդյունքում Խ. Լինցը և Ա. Ստեպանը սահմանել են կայացած ժողովրդավարության երեք չափումներ՝ վարքային, արժեքային և սահմանադրական[27]: Վերջինի առկայության դեպքում թե իշխանական, թե ընդդիմադիր ուժերն ամբողջ երկրի տարածքում գործում են ժողովրդավարական գործընթացով ընդունված օրենքների, ընթացակարգերի և ինստիտուտների շրջանակներում և համարում են, որ առաջացող խնդիրները կարող են լուծվել դրանց շրջանակներում: Հետաքրքիր է, որ այս սահմանումն արտացոլում է բոլոր երեք չափումների փոխկապակցվածությունը, քանի որ առանց վարքային ու արժեքային չափումների առկայության ֆորմալ նորմերը չեն դառնա վարքականոն քաղաքական ուժերի համար: Հետևաբար դեպի կայացած ժողովրդավարություն ընթացքը ենթադրում է ոչ միայն սահմանդրության՝ ժողովրդավարական արժեքների ու սկզբունքների ընդունում, այլև դրանց յուրացում որպես արժեքային ու վարքային նորմեր հասարակության ճնշող մեծամասնության կողմից՝ սահմանադրականության գոյություն: Իհարկե, ժամանակակից ժողովրդավարությունն իր բոլոր սահմանադրական բաղադրիչներով արդարացիորեն ասոցացվում է արևմտյան մշակույթի կամ քաղաքակրթության հետ:[28] Ըստ Մարտիշինի, դրանք կարող են փոխառվել, բայց և ենթարկվել իմաստազրկման, հանգեցնել կեղծ արարողակարգի և կորցնել ժողովրդավարական բովանդակությունը, եթե չի իրականացվում ավելի բարդ՝ քաղաքական մշակույթի հիմքում ընկած արժեքների ու սկզբունքների փոխառությունը, մինչդեռ հենց դրանք են որոշում, թե իրականում ուր է գնում երկիրը կամ ինչ է ցանկանում փոխառնել: Պատահական չէ, որ ուսումնասիրելով հետկոմունիստական հասարակություններում սահմանադրական դիզայնի զարգացումները, Էլստերը, Օֆֆեն և Պրոսը նկատել են, որ «հաջող տրանսֆորմացիայի առավել նշանակալի գործոնը ժառանգած աշխարհայացքի, վարքի մոդելների և բազային սոցիալական և

[27] **Linz J.J., Stepan A.,** Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South Africa, and PostCommunist Europe. Baltimore: The Johns Hopkins University Press, 1996, p. 16.

[28] **Мартышин О.В.,** Национальная политическая и правовая культура в контексте глобализации, Государство и право, 4, 2005, 9-17.

քաղաքական հասկացությունների համատեղելիությունն է ժամանակակից հասարակության ֆունկցիոնալ պահանջների հետ… հասարակության սոցիալական և մշակութային կապիտալի՝ անցյալի ժառանգությունը ներկայի պահանջներին համապատասխանեցնելու ներուժը»[29]: Նրանք սահմանադրական գործընթացների հաջողությունը՝ սահմանադրականության հաստատումը հետկոմունիստական հասարակություններում բանաձևել են որպես «ժառանգություն, ինստիտուտներ, որոշումներ»[30] եռամիասնություն, առաջինով բնութագրելով քաղաքացիների դավանած արժեքները, նրանց ընկալումներն ու ավանդույթներ, երկրորդով՝ սահմանադրական կառուցվածքը, երրորդով՝ ինստիտուտների բովանդակությունը:

Սահմանադրականություն. արժեքներ, ինստիտուտներ, որոշումներ

Հետաքրքիր է, որ մի շարք ուսումնասիրողներ նշում են ոչ միայն հասարակության մեջ արմատավորված արժեքների ու սկզբունքների ազդեցությունը ինստիտուտների ու նրանց ընդունած որոշումների վրա՝ այդ արժեքների ու սկզբունքների համապատասխան բովանդակության պայմաններում, այլև հակառակը՝ ինստիտուտների ու դրանց որոշումների ազդեցությունը հասարակության մեջ տիրապետող արժեքների ու սկզբունքների փոփոխության վրա: Ըստ Դայմոնդի, քաղաքական մշակույթի գնահատման և էվոլյուցիոն չափումները բավական «պլաստիկ» են և կարող են մեծ չափով փոխվել՝ որպես արձագանք վարչակազմի գործունեությանը, պատմական փորձին և քաղաքական սոցիալիզացիային:[31] Իսկ Էլստերի և գործընկերների վերոհիշյալ ուսումնասիրության հետևություններից մեկը փաստում է, որ ժողովրդավարության կայացման կարևորագույն դետերմինանտը հենց նոր ինստիտուտների ձևավորող ազդեցությունն է, այսինքն, քաղաքացիների ընկալումներ, ավանդույթներ, ընդունված փորձ, սպասումներ (և անգամ հիշողություններ) ձևավորելու հատկությունն է թույլ տալիս անհիմն համարել ժառանգած վախերը, թշնամանքն ու

[29] **Elster J., Offe C., Preuss U.**, Institutional Design in Post-communist Societies: Rebuilding the Ship at Sea. Cambridge: Cambridge University Press, 1998, pp. 307-308.
[30] Նույն տեղում:
[31] Political Culture and Democracy, *Political Culture and Democracy in Developing Countries* (Ed. By L. Diamond). Boulder, CO: Lynne Rienner Publishers, 1993, p. 9.

կասկածները:[32] Այս հետադարձ կապը փաստում է, որ թեև սահմանադրության լիարժեք արդյունավետությունը դրսևորվում է սահմանադրականության առկայության պարագայում, սակայն վերջինիս հասնելու համար սահմանադրության որակը նույնպես կարևոր է: Սահմանադրության ընձեռած հնարավորություններով է պայմանավորված ինստիտուտների ազդեցությունը հասարակության մեջ տիրապետող արժեքների ու սկզբունքների փոփոխության վրա: Այդ ինստիտուտների շրջանակներում որոշում ընդունողների պատկերացումներից է կախված նման փոփոխությունների ուղղությունը: Քանի որ կուսակցություններն են համալրում քաղաքական ինստիտուտներն, ապա ակնհայտ է, որ հետկոմունիստական հասարակություններում ժողովրդավարության զարգացման տեսակետից կարևորագույն նշանակություն ունեն մակրոքաղաքական ինստիտուտները և դրանց հարաբերությունը կուսակցական համակարգի հետ:[33]

Կուսակցությունները որպես ժողովրդավարության կայացման առանցքային դերակատարներ

Հետկոմունիստական հասարակություններում չափազանց բարդ խնդիր է կուսակցությունների կայացումը, քանի որ ժողովրդավարացման գործընթացում այդ հասարակությունների հաջողությունը մեծապես կախված է այդ երկրների նախախորհրդային ուղուց և դրա վերաբերյալ պահպանված հիշողությունից[34]: Վերոհիշյալ երկրորդ խմբի երկրներն, ի տարբերություն առաջին խմբի, ոչ միայն անցել են խորհրդային տոտալիտար միակուսակցական համակարգի ուղին, այլև մինչխորհրդային շրջանում էլ չեն ունեցել քիչ թե շատ կայացած քաղաքական կազմակերպություններ: Այդ բոլոր երկրների կուսակցական համակարգերին նույնպես այս կամ այն չափով հատուկ են բազմակուսակցական համակարգի չկայացածությունը պայմանավորող

[32] **Elster J., Offe C., Preuss U.,** …, p. 296.
[33] **Power T., J., Casiorowski M., J.,** Institutional Design and Democratic Consolidation in the Third World, *Comparative Political Studies*, **30**, 2, 2007, 121-136.
[34] **Թորոսյան Տ.,** Հասարակական …, էջ 233-249.

արատները[35]՝ գերնախագահական համակարգ, թույլ ինստիտուցիոնալ կառուցվածք և ոչ ֆորմալ կառույցների գերակայություն կուսակցական գործունեության հարթությունում: Առաջին փուլում էլեկտորալ շուկան գրավեցին ֆինանսա-արդյունաբերական խմբերը, որոնք արագ հասկացան քաղաքական ազդեցության ձեռքբերման անհրաժեշտությունը՝ որպես տնտեսական ազդեցության կարևոր լրացում: Կուսակցությունների փոխարեն կարևոր դերակատարություն ստացան նրանց փոխարինող ոչ ֆորմալ կառույցները: Այս ամենն ուղեկցվում է այն խնդիրներով, որոնք հատուկ են նաև այլ հասարակություններում գործող կուսակցություններին: Ըստ Սակվայի, «Կայուն կուսակցական համակարգերի ձևավորումն անհնարին է, քանի դեռ ձևավորվող քաղաքացիական հասարակությունը չի ստացել կառուցվածք, ձև և բովանդակություն: Քաղաքացիական հասարակության թուլությունը խոչընդոտում է կուսակցական համակարգերի, ինստիտուտների ձևավորումն ու կայացումը, որոնք ներկայացուցչական ժողովրդավարության հիմքն են»[36]: Սակայն կա նաև հակադարձ կապը՝ որտեղ չկա լիարժեք զսպումների համակարգ կուսակցությունների համար (հատկապես՝ իշխող), այնտեղ քաղաքացիական հասարակության կայացումը կապված է լուրջ դժվարությունների հետ, քանի որ, ըստ Ա. Շայոի, կուսակցություններն առաջին հերթին հետաքրքրված են ընտրողների աջակցությամբ և ոչ քիչ դեպքերում հակված են ոչ այնքան մասնագիտական, որքան պոպուլիստական նպատակների հոչակմանը: Հետևաբար անհրաժեշտ են չեզոք կառույցներ, որոնք հասարակությանը պետք է ներկայացնեն չեզոք, մասնագիտական կարծիք իշխանության իրականացրած ծրագրերի և առաջարկվող լուծումների վերաբերյալ՝ զսպելով կառավարության գայթակղությունն ի նպաստ հատվածական շահերի[37] և հասարակության գայթակղությունն ընդդիմության պոպուլիստական հայտարարություններով: Մասնագիտական անաչառ, քաղաքական ազդեցություններից զերծ միջավայրերի ձևավորումը՝ որպես փորձագիտական կենտրոններ, առողջ կուսակցական համակարգի ձևավորման և կայացման կարևորագույն գործոնն է: Իսկ այդ միջավայրերի

---

[35] **Hale H.,** Why Not Parties in Russia? Democracy, Federalism, and the State. Cambridge: Cambridge University Press, 2006.

[36] **Саква Р.,...**

[37] **Шайо А.,** Нейтральные институты и их роль в формировании доверия к власти в восточноевропейских демократиях, *Сравнительное конституционное обозрение*, 3 (48), 2004, 103-117.

կայացման երաշխիքը ինտեգրվածությունն է միջազգային մասնագիտական միջավայրերին: Սահմանադրականության հաստատման ժամանակ կարևոր զսպող առաքելություն ունեն նաև սահմանադրական դատարանները: Սակայն այս ինստիտուտը ևս պետք է հաղթահարի լուրջ մարտահրավերներ՝ զերծ մնալու համար քաղաքական համակարգի ազդեցությունից: Միաժամանակ, առկա է այդ կառույցերին առնչվող ևս մեկ վտանգ: Ինչպես նշում է Ռ. Ուիտցը, «դատարանի չափազանց ակտիվությունը հղի է լուրջ վտանգով՝ իշխանության այլ թևերի լիազորությունների ոլորտի հակահիրավական միջամտությամբ… Այդ խնդիրներն առաջանում են ոչ միայն այն դեպքում, երբ հսկողության օրգանները դուրս են գալիս արարողակարգային սահմաններից, այլև այնպիսի կարևոր ոլորտի առնչությամբ, ինչպիսին սահմանադրության դատական մեկնաբանումն է»[38]: Որոշ արտահիրավական փաստարկներ՝ արժեքային դատողություններ, տրամաբանական փաստարկներ, հղումներ պատմությանն ու ավանդույթներին, կասկածելի համբավ ունեն: Դրանք ասոցացվում են դատարանների չափից ավելի ակտիվության հետ, իսկ երբեմն էլ՝ «դատական իրավաստեղծման»:[39]

Եզրակացություն

Հետկոմունիստական տրանսֆորմացիայի ընթացքի, դրա երրորդ փուլում գտնվող երկրների ժողովրդավարացման գործընթացների բարդությունների ու մարտահրավերների, ինչպես նաև այդ երկրներում տրանսֆորմացիայի վրա սահմանադրական գործընթացների զարգացումների ազդեցության վերլուծությունը ցույց է տալիս, որ

1. Հետկոմունիստական տրանսֆորմացիան ուրույն, բարդ, եռափուլ և եռավեկտոր գործընթաց է, որի ժամանակ ժողովրդավարության հաստատումը ոչ թե անվերապահ ելք է, այլ այլընտրանքներից մեկը;
2. Հետկոմունիստական տրանսֆորմացիայի երկրորդ խմբի երկրների հետագա ընթացքի վրա մեծ է աշխարհաքաղաքական գործոնի գերիշխանության փուլի ազդեցությունը, սակայն անկախ իրենց արտաքին

[38] **Уитц Р.,** Об отсутствии в толковании конституции, *Конституционное право: восточноевропейское обозрение*, 1(38), 2002, 26-35.
[39] **Dorsen N.,** How American Interpret the Bill of Rights, *Constitutional Commentary*, 1994, **11**, 2, 372- 386.

կողմնորոշումից, այդ երկրները կպահպանեն <<ժողովրդավարություն, թե ավտորիտարիզմ>> երկընտրանքի հնարավորությունը:

3. Այդ գործընթացում գտնվող երկրների համար ոչ թե սահմանադրության ընդունումն է ժողովրդավարական զարգացումների երաշխիք, այլ սահմանադրականության հաստատումը կայացած ժողովրդավարության երեք չափումների առկայության շնորհիվ:

4. Հետկոմունիստական տրանսֆորմացիայի ընթացքը դեպի կայացած ժողովրդավարություն մեծապես կախված է հասարակության դավանած արժեքներից ու սկզբունքներից, թեև այդ արժեքներն ու սկզբունքները կարող են նաև փոխվել ինստիտուտների ազդեցության ներքո;

5. Սահմանադրականության հաստատման տանող սահմանադրական գործընթացներում առանցքային դերակատարություն ունեն կուսակցությունները՝ որպես համապատասխան արժեքների ու սկզբունքների հիման վրա ինստիտուտների ձևավորման և որոշումների ընդունման կենտրոններ;

6. Բազմակուսակցական համակարգի անցանկալի այլափոխումների զսպման մեխանիզմը եռաբաղադրիչ է՝ ընթացակարգային, իրավական և բազմակարծային: Առաջինի հիմքը ազատ և արդար ընտրությունների անցկացումն է, երկրորդինը՝ անաչառ սահմանադրական վերահսկողությունը, երրորդինը՝ հասարակական կարծիքի ձևավորման մեջ կարևոր դերակատարություն ունեցող, միջազգային մասնագիտական կառույցներին ինտեգրված, անկախ մասնագիտական կառույցները:

The Impact of Constitutional Processes on the Democratization of Post-Soviet Transformation Countries

TIGRAN TOROSYAN
Brusov State University of Languages and Social Sciences, Armenia
Center of Perspective Researches and Initiatives

The article discusses the democratization problems of the countries in the third stage (intensification of geopolitical influences) of the post-Soviet transformation. Although it may seem that for the third group of the post-Soviet transformation countries the further course becomes unambiguous as a consequence of geopolitical orientation resulting from the intensification of that influence, however due to several circumstances the possibility of the alternative “democracy vs authoritarianism” will remain for this group of countries for a long time. The final choice will depend on the success of the transition from constitution to

constitutionalism. A key role in that process has the state of multi-party system, the most essential factor of which is the formation of professional environments devoid of political influences.